## ՊԱՏՃԵՆԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N <<ՀՀ ՍՆ-ՇՀԾՁԲ-15/10-17/1>>

ք. Երևան <<20>> փետրվարի 2017թ.

ՀՀ սփյուռքի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ֆ.Զաքարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, «Էյչիէն ֆորեվը փարթներս» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ն.Առաքելյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է պատճենահանման և համակարգչային ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրությամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության ընդհանուր գինը կազմում է 655500 (վեց հարյուր հիսունհինգ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25-ը դեկտեմբերի 2017թ.:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

---

[1] *Պայմանագիրն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կհատկացվեն ֆինանսական միջոցներ և կկնքվի համաձայնագիր:*

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից մինչև դեկտեմբերի 20-ը 2017թ և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում

Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ սփյուռքի նախարարություն
ք. Երևան, Վ.Սարգսյան 3
ՀՀ ՖՆ աշխ. գործառ. վարչություն
Հ/Հ 900011039030, Հ/Հ 900011039048
ՀՎՀՀ 02705838

(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Էյջի էն ֆորեվը փարթներս» ՍՊԸ
ք. Երևան, Ե. Քոչար 25/15
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2052022170357001
ՀՎՀՀ 01571279

(ստորագրություն)

Կ.Տ.

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

Հավելված 1
<<20>> փետրվարի 2017թ. կնքված
N <<ՀՀՄՆ-ՇՀԾՁԲ-15/10-17/1>> ծածկագրով գնման պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | | |
|---|---|---|
| Հ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման ժամկետ |
| 1 | Քարթրիջի լիցքավորում ներառյալ տոները (HP laserJet P1102d) տպիչի համար /առավելագույնը 30 անգամ տարվա ընթացքում | 2017թվական՝ Սկիզբ՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 7-րդ աշխատանքային օրվանից սկսած Ավարտ՝ մինչև 2017թ. դեկտեմբերի 20-ը |
| | Քարթրիջի լիցքավորում ներառյալ տոները (HP laserJet P2055d)տպիչի համար /առավելագույնը 30 անգամ տարվա ընթացքում/ | |
| | Քարթրիջի լիցքավորում ներառյալ տոները (HP laserJet P1505n)տպիչի համար/առավելագույնը 60 անգամ տարվա ընթացքում | |
| | Քարթրիջի լիցքավորում ներառյալ տոները (HP laserJet 1018) տպիչի համար/առավելագույնը 30 անգամ տարվա ընթացքում | |
| | Քարթրիջի լիցքավորում ներառյալ տոները (HP Color laserJet 2600n ) տպիչի համար, սև /առավելագույնը 5 անգամ տարվա ընթացքում | |
| | Քարթրիջի լիցքավորում ներառյալ տոները (HP Color laserJet 2600n) տպիչի համար կապույտ կամ կարմիր կամ դեղին/առավելագույնը 5 անգամ տարվա ընթացքում | |
| | Քարթրիջի լիցքավորում ներառյալ տոները (Xerox Copycentre c118 ) պատճենահանման մեքենայի համար /առավելագույնը 5 անգամ տարվա ընթացքում | |
| | Քարթրիջի լիցքավորում ներառյալ տոները ( Canon IR 2018 ) պատճենահանման մեքենայի համար/առավելագույնը 5 անգամ տարվա ընթացքում | |
| | Քարթրիջի թմբուկի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ Թմբուկը (HP LaserJet P1102d) տպիչի համար/առավելագույնը 30 անգամ տարվա ընթացքում | |
| | Քարթրիջի թմբուկի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ Թմբուկը (HP LaserJet P2055d) տպիչի համար | |
| | Քարթրիջի թմբուկի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ Թմբուկը (HP LaserJet P1505n) տպիչի համար/առավելագույնը 60 անգամ տարվա ընթացքում | |
| | Քարթրիջի թմբուկի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ Թմբուկը (HP laserjet 1018) տպիչի համար/առավելագույնը 30 անգամ տարվա ընթացքում | |
| | Քարթրիջի թմբուկի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ Թմբուկը (HP Color laserjet 2600n) տպիչի համար/առավելագույնը 5 անգամ տարվա ընթացքում | |
| | Քարթրիջի թմբուկի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ Թմբուկը (Xerox Copycentre c118 ) պատճենահանման մեքենայի համար/առավելագույնը 5 անգամ տարվա ընթացքում | |
| | Քարթրիջի լիցքավորում ներառյալ տոները (Canon IR 2018 ) պատճենահանման մեքենայի համար/առավելագույնը 5 անգամ տարվա ընթացքում | |
| | Քարթրիջի մագնիսական լիսերի փոխարինում առանց | |

| | | |
|---|---|---|
| | լիցքավորման ներառյալ մագնիսական լիսեռը (HP LaserJet P1102d) տպիչի համար/առավելագույնը 30 անգամ տարվա ընթացքում | |
| | Քարթրիջի մագնիսական լիսեռի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ մագնիսական լիսեռը (HP LaserJet P2055d) տպիչի համար/առավելագույնը 30 անգամ տարվա ընթացքում | |
| | Քարթրիջի մագնիսական լիսեռի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ մագնիսական լիսեռը (HP LaserJet P1505n) տպիչի համար/առավելագույնը 60 անգամ տարվա ընթացքում | |
| | Քարթրիջի մագնիսական լիսեռի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ մագնիսական լիսեռը (HP laserJet 1018) տպիչի համար/առավելագույնը 30 անգամ տարվա ընթացքում | |
| | Քարթրիջի մագնիսական լիսեռի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ մագնիսական լիսեռը (HP Color laserjet 2600n) տպիչի համար/առավելագույնը 5 անգամ տարվա ընթացքում | |
| | Քարթրիջի մագնիսական լիսեռի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ մագնիսական լիսեռը (Xerox Copycentre c118 ) տպիչի համար/առավելագույնը 5 անգամ տարվա ընթացքում | |
| | Քարթրիջի մագնիսական լիսեռի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ մագնիսական լիսեռը (Canon IR 2018 ) տպիչի համար/առավելագույնը 30 անգամ տարվա ընթացքում | |
| | Քարթրիջի չափի դանակի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ չափի դանակը (HP LaserJet P1102d) տպիչի համար/առավելագույնը 30 անգամ տարվա ընթացքում | |
| | Քարթրիջի չափի դանակի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ չափի դանակը (HP LaserJet P2055d) տպիչի համար/առավելագույնը 30 անգամ տարվա ընթացքում | |
| | Քարթրիջի չափի դանակի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ չափի դանակը (HP LaserJet P1505n) տպիչի համար/առավելագույնը 60 անգամ տարվա ընթացքում | |
| | Քարթրիջի չափի դանակի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ չափի դանակը (HP laserJet 1018) տպիչի համար/առավելագույնը 30 անգամ տարվա ընթացքում | |
| | Քարթրիջի չափի դանակի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ չափի դանակը (HP Color laserjet 2600n) տպիչի համար/առավելագույնը 5 անգամ տարվա ընթացքում | |
| | Քարթրիջի չափի դանակի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ չափի դանակը (Xerox Copycentre c118 ) տպիչի համար/առավելագույնը 5 անգամ տարվա ընթացքում | |
| | Քարթրիջի չափի դանակի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ չափի դանակը (Canon IR 2018 ) տպիչի համար/առավելագույնը 30 անգամ տարվա ընթացքում | |
| | Քարթրիջի ռետինե լիսեռի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ ռետինե լիսեռը (HP LaserJet P1102d) տպիչի համար/առավելագույնը 30 անգամ տարվա ընթացքում | |
| | Քարթրիջի ռետինե լիսեռի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ ռետինե լիսեռը (HP LaserJet P2055d) տպիչի համար/առավելագույնը 30 անգամ տարվա ընթացքում | |
| | Քարթրիջի ռետինե լիսեռի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ ռետինե լիսեռը (HP LaserJet P1505n) տպիչի համար/ առավելագույնը 30 անգամ տարվա ընթացքում | |

| | | |
|---|---|---|
| | Քարթրիջի ռետինե լիսերի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ ռետինե լիսերը (HP laserJet 1018) տպիչի համար/առավելագույնը 30 անգամ տարվա ընթացքում | |
| | Քարթրիջի ռետինե լիսերի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ ռետինե լիսերը (HP Color laserjet 2600n) տպիչի համար/առավելագույնը 5 անգամ տարվա ընթացքում | |
| | Քարթրիջի ռետինե լիսերի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ ռետինե լիսերը (Xerox Copycentre c118 ) տպիչի համար/առավելագույնը 5 անգամ տարվա ընթացքում | |
| | Քարթրիջի ռետինե լիսերի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ ռետինե լիսերը (Canon IR 2018 ) տպիչի համար/առավելագույնը 5 անգամ տարվա ընթացքում | |
| | Քարթրիջի մաքրող դանակի փոխարինում ներառյալ մաքրող դանակը (HP LaserJet P1102d) տպիչի համար/առավելագույնը 30 անգամ տարվա ընթացքում | |
| | Քարթրիջի մաքրող դանակի փոխարինում ներառյալ մաքրող դանակը (HP LaserJet P2055d) տպիչի համար/առավելագույնը 30 անգամ տարվա ընթացքում | |
| | Քարթրիջի մաքրող դանակի փոխարինում ներառյալ մաքրող դանակը (HP LaserJet P1505n) տպիչի համար/առավելագույնը 60 անգամ տարվա ընթացքում | |
| | Քարթրիջի մաքրող դանակի փոխարինում ներառյալ մաքրող դանակը (HP laserJet 1018) տպիչի համար/առավելագույնը 30 անգամ տարվա ընթացքում | |
| | Քարթրիջի մաքրող դանակի փոխարինում ներառյալ մաքրող դանակը (HP Color laserjet 2600n) տպիչի համար/առավելագույնը 5 անգամ տարվա ընթացքում | |
| | Քարթրիջի մաքրող դանակի փոխարինում ներառյալ մաքրող դանակը (Xerox Copycentre c118 ) տպիչի համար/առավելագույնը 5 անգամ տարվա ընթացքում | |
| | Քարթրիջի մաքրող դանակի փոխարինում ներառյալ մաքրող դանակը (Canon IR 2018) տպիչի համար/առավելագույնը 30 անգամ տարվա ընթացքում | |
| | Թմբուկի փոխարինում (Xerox Copycentre c118 ) պատճենահանման մեքենայի համար/առավելագույնը 5 անգամ տարվա ընթացքում | |
| | ***Նախատեսված ծառայությունների մատուցման /վերոնշյալ/ ընթացքում օգտագործվող պահեստամասերի և նյութերի տրամադրումը իրականացվում է Կատարողի կողմից: Լիցքավորման, սպասարկման, փոխարինման և վերանորոգման ենթակա սարքերի տեղափոխումն ու վերադարձն իրականացվում է Կատարողի կողմից Պատվիրատուի հասցեից: Ծառայության մատուցը իրականացվում է Պատվիրատուի կողմից պահանջի ներկայացման օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում:** | |

*Կատարողը ծառայությունները մատուցում է ք.Երևան, Վ.Սարգսյան 3 հասցեում:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ սփյուռքի նախարարություն
ք. Երևան, Վ.Սարգսյան 3
ՀՀ ՖՆ աշխ. գործառ. վարչություն
Հ/Հ 900011039030, Հ/Հ 900011039048
ՀՎՀՀ 02705838

(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«Էյջիէն ֆորեվը փարթներս» ՍՊԸ
ք. Երևան, Ե. Քոչար 25/15
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2052022170357001
ՀՎՀՀ 01571279

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 2
<<20>> փետրվարի 2017թ. կնքված
N <<ՀՀՍՆ-ՇՀԾՁԲ-15/10-17/1>> ծածկագրով գնման պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| N | Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1. | պատճենահանման և համակարգչային ծառայությունների ձեռքբերման՝ նախարարության աշխատակազմ | | | 25550 | 51100 | 76650 | 102000 | 127500 | 153000 | 178500 | 204000 | 229500 | 255500 | **255500** |
| 2 | պատճենահանման և համակարգչային ծառայությունների ձեռքբերման՝ նախարարի աշխատակազմ | | | 10000 | 20000 | 30000 | 40000 | 50000 | 60000 | 70000 | 10000 | 300000 | 400000 | **400000** |

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*
***Վճարումներն իրականացվում են ըստ ներկայացված հաշիվ-ապրանքագրի:*
**** Ծառայության մատուցը իրականացվում է Պատվիրատուի կողմից պահանջի ծագման դեպքում*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ սփյուռքի նախարարություն
ք. Երևան, Վ.Սարգսյան 3
ՀՀ ՖՆ աշխ. գործառ. վարչություն
Հ/Հ 900011039030, Հ/Հ 900011039048
ՀՎՀՀ 02705838

(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«Էյջիէն ֆորեվը փարթներս» ՍՊԸ
ք. Երևան, Ե. Քոչար 25/15
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2052022170357001
ՀՎՀՀ 01571279

(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված 3*
*<<20>> փետրվարի 2017թ. կնքված*
*N <<ՀՀՍՆ-ԾՀԾՁԲ-15/10-17/1>> ծածկագրով գնման պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| գտնվելու վայրը ______________ | գտնվելու վայրը ______________ |
| հհ ______________________ | հհ______________________ |
| ______________________ | ______________________ |
| հվհհ ______________________ | հվհհ______________________ |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«    » «                    » 20   թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ________________________________________________

________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ ____________
Պատվիրատուն՝                    ի                    դեմս
________________________________________________ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս ________________________________________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «________________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույց |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________ | ______________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*<<20>> փետրվարի 2017թ. կնքված*
*N <<ՀՀՍՆ-ՇՀԾՁԲ-15/10-17/1>> ծածկագրով գնման պայմանագրի*

# ԱԿՏ N

## պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ---------------------------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
---------------------------------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N -------------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ----------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| **Անվանումը** | **Քանակական ցուցանիշը (փաստացի)** | **Չափի միավորը** |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КОՂՄԵՐԸ

| **Հանձնեց** | **Ընդունեց**<br>հայտը նախագծած ներկայացուցիչ՝ |
|---|---|
| ______________________<br>ազգանուն, անուն | ______________________<br>ազգանուն, անուն |
| ______________________<br>ստորագրություն | ______________________<br>ստորագրություն |